

ՀԱՍՏԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ
այլ գրութիւնք ետ չեն զրկուիր: Յօդ-
ուածներու պատշաճ դատուածները միայն
կը հրատարակուին:

Բաժնեգնի կամ ծանուցման փոխարէն ա-
մէն երկրի նամակագրօջմներ (փուլ) կ'ըն-
դունուին հարիւրին 20 պակաս հաշուելով:

Մանուցումներ կ'ընդունուին դիւրա-
մատչելի գիններով:

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան , , 2
Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը
ծախուի հատը 10 սանթիմ:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը
պատկանի:
Բաժնեգիրները կանխիկ վճարելի են:
Թերթ ուղղորդու բաժնեգիրը չէ
պարունակող նամակները նկատի չեն
առնուիր:
«Միութիւն»ը և ոչ մի տեղ ձրի չը
զրկուիր:

Գին 10 ՍԱՆԹԻՄ ԿԻՍԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ Գին 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ

1113

ՄԱՅԻՍ

1899

Թիի 31

Լրագրոյս մէջ բոլոր հրատարա-
կուածներու պատասխանատուութիւնը
կը պատկանի իւրաքանչիւր յօդուածի
հեղինակին:

ՄԱՀ ԴԱՒԱՃԱՆԱՑ

Այս անունով ընկերութեան մը
կազմութիւնը գրած էինք մեր ան-
ցեալ թիւով, առ այս աւելորդ չենք
համարիր երկու խօսք ընել:

Անհերքելի ճշմարտութիւն մ'է
որ մեր ազգային գործերը աւելի քան
երբեք այժմ անգործութեան մատ-
նուած հայ ժողովուրդը — ըլլայ հա-
րուստ ըլլայ աղքատ — յուսահատե-
ցուցած ու վատահոգեցեալ խորքը
գլորած են: Ինչ է արդեօք պատ-
ճառը և որո՞ւ պէտք է վերագրել.
պատասխանը շատ պարզ է. հրապա-
րակին վրայ «անունը կայ ինք չկայ»
կուսակցութիւններն են, որոնց մէջ
մուտ գտած են դժբաղդարար լսմէն
տեսակ վատողի արարածներ, գառ-
նազգեստ գայլեր, որ ազգասիրութեան
գլխաւոր տակ ծածկուած՝ ժողովրդի
ամէն խաւերու մէջ մտած ամէն
կարգի ստորնութիւններ յանձն կառ-
նեն իրենց գոյութիւնը պահպանելու
համար: Ասոնց բարեմտօրէն հետեւող
ժողովրդի ինքնախաբէութիւնը և կու-
սակցականաց անվերջանալի կռիւն ի
հարկէ մեր առաջխաղացութեան քայ-
լերը պիտի կասեցնեն ու գէպի կո-
րստեան ճանապարհը պիտի առաջ-
նորդեն մեզ: Ուրեմն մեղաւոր չեն
այն երիտասարդներ, որք ազգասի-
րական զգացումէ թելադրեալ վտան-
գին առաջը առնելու միակ միջոցը
ընտրած են («Մահ Դաւաճանաց») ըն-
կերութիւն մը կազմել և կուսակցու-
թեանց մէջ գտնուող վտանգաւոր
անձերու կեանքին վերջ տալ: Սա՛ մի
ազգասիրական գործ է որ կրնայ ի-
րականապէս դառնալ, սակայն իբր յա-
խուռն գործունէութիւն կրնայ վնա-
սաբեր ալ լինել, ինչու որ գիտնալ
պէտք է թէ՛ տեղի կուտանք եղբայ-
րասպաս կուռի մը, այն ալ արտա-
սահմանի մէջ, որով վարկերնիս կը
կոտրենք Եւրոպացւոց առջև և միև-
նոյն ժամանակ մեր սուրբ դատին ալ
չարաչար կը վնասենք:

Հստ մեզ լաւ կը լինի որ այդ
ընկերութիւնը առ այժմ աշխատա-
ծանչցնել ժողովրդին իր բարեկամն ու
թշնամին, անոնց կուսակցամուլու-
թիւնը մեղմացնել, երկու կուսակ-
ցութեանց մասնաճիւղերը իրարու
հետ յարաբերութեան մէջ մտցնել,
այն ատեն երբ անկեղծները կեղծա-
ւորներէն կը բաժնուին, հրապարակը
ինքնին կը մաքրուի:

* *

Մեր վերի գրածները հաստատե-
լու համար մէջ կը բերենք այն հայ
բարեբարի ազգասիրութիւնը, զոր
մեր Ապրիլ 1 թիւով հրատարակած
էինք: Իսկապէս այս մեծանուն
մարդը իւր 20 հազար ոսկով կը
խոստանայ 6-8 ամիս կարճ ժամա-
նակամիջոցի մէջ 100 հազար անգղ.
ոսկիի գումար մ'ը յատկացնել Սուրբ
Գործին համար, երբ տեսնէ որ յե-
ղափ. հրապարակը մաքրուած է բազ-
մախոյր կեղծ յեղափոխականներէ:
Շատերուն թերեւ անհաւատալի կը
թուի, սակայն ըստ մեզ զուտ ճշ-
մարտութիւն մ'է: Ուրեմն ինչպէս
կրնանք մեր հարուստները մեղադրել,
քանի որ մենք խոչնդոտներ կը յա-
րուցանենք կուսակցական անմիտ
վէճերով: Ահաւասիկ այս պատկա-
ռելի գումարը կը կորսնցնենք մեր
գրպանէն որո՞ւ պատճառով, դար-
ձեալ կուսակցականներուն: Կը զար-
մանանք մեր ժողովրդի խեղճութեան
վրայ, որ այսքան դառն փորձանք-
ներու բովէն անցնելէն յետոյ տակա-
ւին կը շարունակէ իր հին վիճակին
մէջ մնալ ու իբր միամիտ կոյր հե-
տեւող գործիք դառնալ ճարպիկ խո-
րամանկներու քմահաճոյց: Մենք
ճշմարտութիւնը խոստովանելով ա-
տելի դարձանք մեր մի քանի գործա-
կատարներուն ալ, որոնք թուող
Մարտական ըլլալով դիտողութիւններ
կրնեն մեզ թէ՛ «Միութիւն»ը ժամա-
նակէ մը ի վեր է որ Դաւանակցութիւն
կը հոտի: Ինչ տխրամտութիւն: Ինչ
կը յուսանք այս կամ այն կուսակցու-
թեան, մեզ համար ամենքն ալ մէկ
են: Յեղափոխական գաղափարը
պաշտպանելը Դաւանակցական դարձած
ըլլալ չի նշանակեր. երբ Դաւանակցա-
կան կօմիտէ մը կամ պիւրօ մը բա-
նաւոր պատճառով մը կամքաստա-
նուի և այդ առթիւ մեզի կը գրուի
ու չենք հրատարակել, այն ատեն
իրաւունք կրնան ունենալ մեր ան-
կեղծութեան վրայ կասկածելու: Հայ
բարեբարը որ յեղափոխական գործին
համար գումար մը նուիրել կուզէ,
Դաւանակցական ըսելու է անոր: Փա-
փաքելի էր որ մեր ենթադրութիւն-
ներն ու դատողութիւնները աւելի
լուրջ և արդարացի ըլլային:

* *

Գործ շատ կայ, բայց գործողներ
կը պակսին: Յեղափոխական գաղա-
փարը պաշտպանելով չենք ուզեր ըսել
թէ յանկարծ ելլենք թշնամոյն դէմ
ցոյցիւր սարգենք, աննպատակ աղ-
մուկներ հանենք, ո՛չ, յեղափոխու-
թեան հետեւողներ չի կարծենք գիտ-
նալ թէ մեր աղմկայոյզ պոռոտախօ-
սութիւններով յեղափոխականներ և-
զած կը լինին: Այդ գաղափարին

զարկ կը տրուի միայն դրամով ուրիշ
միջոց չկայ թէ անձնազոհութիւն
ալ պէտք է, սակայն երբ պահան-
ջուած դրամը ունենանք անձնազոհ-
ներ չեն պակսիր մեզ, հազարաւոր-
ներ ունինք: Մէկ խօսքով կուզենք
բացատրել թէ մենք մեր պարտակա-
նութեանց մէջ թերի գտնուած ենք:
Եթէ մեր այս ընթացքը շարունա-
կենք ազատութիւն երբեք յուսալու
չենք:

Երբ ոկսինք մենք մեզ լաւ ճա-
նաչել, երբ իրար լաւ հասկնանք, ու
իւրաքանչիւրս առանձին անհատա-
կան պարտականութիւններս կատա-
րենք, այն ատեն միայն ազատու-
թեան յուսոյ դռները մեզ առջև կը
բացուին:

* *

Ինչպէս մեր անցեալ թիւով ծա-
նուցած էինք թէ՛ կարեւոր հայ մը
Պօղոս փաշայի նամակ մը գրելով, Ե-
փրպոսի կամ Աթէնքի մէջ ի յիշա-
տակ Նուպար փաշայի մի հայկ. որ-
բանոցի բացումը խնդրած է, այդ
ազգասէր անձնաւորութիւնը իր ան-
հատական պարտականութիւնը կա-
տարելու համար ճիգեր կը թափէ, ե-
թէ իշխոհա Պօղոս փաշայի յաջորդի
իւր բաղձացած նպատակին հասնիլ
մի կարեւոր և օգտակար գործ է:
Իցի՛ւ թէ ամենքս ալ ազգ. գործերու
յառաջդիմութեան համար անկեղծ
ջանքեր ընէինք, որով մեր ազգին ա-
ռաջ լիովին պարտականութիւննիս
կատարած կը լինին:

Այդ ազնիւ անձնաւորութեան՝
առ Պօղոս փաշա Նուպարին գրած
նամակի պատճէնն հետեւեալն է:

* *

Արտասահման 17 Մարտ 1899

Մարդիկ ցորչափ ի կեանս են,
աճուրդի հանուած ապրանքներու
նման գներ ունին, որք հաստատուն
ու ճիշդ չեն. ճիշդ գինը գերեզմանի
դռնէն կ'սկսի:

Այսպէս եղաւ և Ձերդ վսեմու-
թեան մեծանունը Հօր մասին, որոյ
ցաւը հայն զգաց հանդէպ նորա չիր-
մին. աշխարհ ջատագովեց նորա մեծ
արժանիքը, իսկ հայութիւնը սգաց
ու ողբաց իւր մեծ կորուստը:

Հանրութեան գաղափարը շատ
անգամ ծիծաղելի նախապաշարում
մ'է, որ չ'զգար չ'գնահատիր երբ մեծ
արժէք գոյութիւնը, մեծ մարդը կայ.
Իսկ երբ կը պակսի այն բնական կամ
բարոյական մի ճանապարհով, կ'սկսի
որոնել, փնտռել, գտնել այն մեծ
մարդը՝ որուն արժանիքը չէր ճանչ-
ցած կամ գնահատած ճիշդ ժամա-
նակին. ճիշդ այսպէս եղաւ և մեծա-
հանճար հոգեւոյս Նուպար Փաշայի
նկատմամբ. որոյ յիշատակին յաւեր-

ժացման մի մի ազգաշէն և մարդա-
սէր անմահացուցիչ ձեռնարկի խոր-
հրդածութիւնս ներելի ըրաւ ինձ
գրել ներկայս՝ Ձերդ բարձր վսեմու-
թեան:

Հայ ազգի ներկայ տխուր վի-
ճակի մէջ իւր ձեռներն առ Ձերդ
վսեմութիւն կարկառուն մի միջթա-
րական միջոց գտնելու յուսով շատ
ակնեւեւ է. որպէս և յուսալից Ձեր
ո՛ւ է մի բարի տրամադրութիւնը,
զոր կը փափաքեմ կեղծոյնացնել «Նու-
պարեան Որբանոց» անուն հաստա-
տութեան մը բացման վրայ, ի տեղդ
կամ յ'Աթէնս. հեռի թրքաւաճէն մի-
ջամտութիւնէ և վայրագութիւնէ: Որ-
բանոցն՝ ուր 30-50 որբեր բաւական
է որ խնամուին ու զուտ ազգային
կրթութիւն ստանան, եթէ յարմար
դատուի, կրնայ և մի արհեստի ճիւղ
ունենալ իւր մէջ. որով ո՛չ միայն
մանկունք որբանոցէն դուրս ելած-
նուն պէս գործ և ապրուստ կ'ու-
նենան, այլ և որբանոցն իւր գոյու-
թեան 1-2 տարիէն յետոյ իւր ծա-
խուց մի մասն կը հայթայթէ, իսկ
3-4 տարի վերջ ինքզինքն պահելու
ալ կարող կը լինի, և այսու կը հան-
դիսանայ ցարդ գտնուած որբանոց-
ներէն միակ դրականը, օգտակարը
և որ առաւելն է ազգայինը, որով և
կ'անմահանայ Նուպարեան գերդաս-
տան յիշատակը:

* *

ԺԱՆՏԱՆՏԸ ՄԱՍԿԱԹԻ ՄԵՋ

Օսմանեան առողջապահական
նուիրակին նայելով, ժանտախտը
Մասկաթի մէջ տարածուած է: Շատ
խիստ հսկողութիւններ տեղի պիտի
ունենան ի Փորթ-Սայիտ և ի Սուէզ:
Տագնապը այնքան մեծ չէ սակայն,
վասնզի ինչպէս վիէննայի մէջ պա-
տահեցաւ, կըսուի թէ՛ վարակեալ-
ներն կը զղիւսնելով կարելի պիտի լինի
հիւանդութեան առջև առնուլ:

ՄԱՏԱԿԱՍԿԱՐԻ ԽՆԴԻՐՆ

Հակառակ Անգլիական մամուլին
ըսածներուն, մենք կրնանք պնդել
թէ Ֆրանսայի և Անգլիոյ մէջ բնաւ
բանակցութիւն մը չկայ Մատակաս-
կարի մասին: Ֆրանսայի համար Մա-
տակասկարի խնդիրն լուծուած վեր-
ջացած է արդէն:

ԼԱՀԱՅԻ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎՆ

Ռուսիոյ խնդրանք Պուլկարիան
ևս մասնակցելու է վեհաժողովին:
Թրանսպայը միևնոյն գոհացումը չու-
նեցաւ, վասնզի Անգլիա հակառա-
կեցաւ: Ռուսիա ջանաց Ս. Գահն ալ
ժողովին մէջ մտցնել: Սակայն զօրա-

վարն՝ Գանէվարօ բացարձակապէս մերժեց զայն, մերժում մը զոր ամենայնայնոյն մարդիկն չեն հաստատեր. ինչպէս կը տեսնուի պ. Վիքտորի վէնսօթայի բռնած ընթացքէն որ մերժեց Խալիլոյ ներկայացուցիչ չինել ի Լահայ:

ՊՐՈՒԲՍԷԼԻ ԿՈՆՑԵՐԱՆՑԻԱՆ

Անգլիոյ հրաւէրներուն տեղի տալով, Պելճիքա մօտ ժամանակներս ժողով մը ընել պիտի տայ ի Պրուքսէլ, Ափրիկէի մէջ ալքօօլ մտցնելու խնդրոյն համար: Յորանսան Պրուքսէլի Դաշապ հնազանդելով, արդէն իւր ներկայացուցիչներն նշանակեր է, այդ խնդրոյն ամենալաւ լուծում տալու:

Մեզ գիտեմ կուտան թէ անգլիական կառավարութիւնը որ այնքան մարդասէր կը ցուցնէ ինքզինքն երբ խնդրեն Ափրիկէի սեւերուն վրայ է և կամ այդ ալքօօլի վրայ — զոր ինքը չէ ներմուծողը — չի վարանեցաւ Չինաստանի դէմ պատերազմ բանալու, անոր իւր ափսոսանքն գործածել տալու համար:

Սկզբունքով, Ափրիկէ ալքօօլ մտցնելու խնդրոյ մասին որոշութեան մը պիտի յանգին, սակայն որոշուած օրէնքներն գործադրելու համար բաւական դժուարութեանց պիտի հանդիպին, վասնզի անկարելի պիտի լինի գէթ սկիզբները և դեռ երկար ժամանակ, կանոնաւոր մաքս մը հաստատելը:

ԱՌԱՆՑ ԹԵԼԻ ՀԵՌԱԿԻՐԸ

Պ. Մարգօնի — որ առանց թելի հեռագիրը հնարած է — նոր և

սքանչելի փորձեր ըրաւ հրէկ՝ ֆրանսական ծովեղբայրէն անգլիական ծովեղբայրը հեռագիրներ զրկեց և ընդունեցաւ: Այս գիտնականը իւր գործիքներուն մէջ այնպիսի կատարելութիւններ մտցուցեր է որ անկարելի է անոնց շնորհիւ զրկուած լուրերն բռնուին: Պ. Մարգօնիի գիտն օր ըստ օրէ մեծ կարեւորութիւն կ'ստանայ:

ՔԵՏՆԻ ՏԱԿԻ ԲԱՐԻՉԸ

Բարեգի մետրոպոլիտական երկաթուղւոյ քիծը, որ ամբողջ քաղաքին երկայնութեամբ անցնելու — Վէնսէնի անտառէն մինչև Բուա տը Բուլօյն անտառ — գրեթէ վերջացած է. քանի մը ամիսէն երթեկեկութիւնները պիտի սկսին: Ցուցահանդէսի ժամանակ այցելուները 10 սանդիկ փոքրիկ գումարով, պիտի կարենան Բարեգի մէկ ծայրէն միւսը երթալ, ամենաբարձր միջոցով:

Ինչ որ հրաշալի է այս ահագին աշխատանքը կատարուած է առանց քաղաքին երթեկեկութիւնը խանգարելու: Այս շոգեկառքը մէկ ծայրէն միւսը գէտնի տակէն է, երթեկեկութիւնները դիւրացնելու համար ու թը մեծ կայարաններ հաստատած է ընկերութիւնը որոնք նոյնպէս գետնի տակն են: Երկաթուղիին ճամբան եօթը մեղր լայնութիւն ունի, իսկ կայարանները 14 մեղր պիտի ունենան: Թէ ուղին և թէ կայարանները երկաթուղական լուսով պիտի լուսաւորուին և ցերեկուան պէս լոյս պիտի լինին: Վեց ամիսէն աւելի հարկաւոր չեղաւ այս գործն զլուս բերելու: Գործաւորներն աշխատելու և վտանգէ զերծ մնալու համար պողպատէ վահաններով

Արփիար — Ծառ լաւ:

(Իրարու քով կը յառաջանան):

Թափառիկ — Չարժեք խնդրոյն կենդանութիւն տալու համար ցոյց ընել, քանի որ Եւրոպայ տրամադիր չէ մեր խնդրով զրազելու. անոր մեռած կամ կենդանի ըլլալը նշանակութիւն մը չունի: (Ինքն պէտք է անոնց տրամադրութիւններուն հետեւինք, մենք չենք կարող, և մտածելն ալ յիմարութիւն է, Եւրոպան ստիպել որ մեր խնդրը ձեռք առնէ:

Արփիար — Այնպիսի վիճակ մը ստեղծելու ենք որ Եւրոպայ անպատճառ ստիպուի մեր խնդրով զբաղիլ:

Թափառիկ — Անօգուտ է, Եւրոպայ ըսելով ինչ կուզէք իմանալ: Յորանսան Ռուսիոյ փէշերէն չի զատուիր, Գերմանիա և Աւստրիա անտարբեր, Իտալիա Անգլիոյ տիւտիկը կը շալէ, ինքնին հեղինակութիւն չունի: Ուրեմն կը մնան Անգլիա և Ռուսիա. Անգլիա այս միջոցին բնաւ տրամադիր չիլըսար կամ պատրաստ չի գտնուիր հայկական խնդրը վերջնականապէս իր ցանկութիւններուն համաձայն լուծել. իսկ Ռուսիա արդէն յայտնի իր Հայաստանի ծրարքով, Լօպանօֆի բերնով Ռուսիա յայտարարեց որ իր թիւն տակ երկրորդ Պուլկարիա մը չուզեր ստեղծել և թէ հայկական անկախութիւնը ուղղակի իր շահերուն հակառակ է:

Արփիար — Է՛հ, դուք ալ դիւանագիտական մասալներ կը կարդաք: Թափառիկ — Մասալ չէ, իբրողութիւն է: Քանի որ մեր միակ յոյսը Անգլիոյ վրայ է, և քանի որ Անգլիա այժմ տրամադիր չէ հայկական խնդրը լուծելու, ցոյց ինքնին աւելորդ է. պէտք է սպասել յարմար ժամանակին:

Արփիար — Ասկէ յարմար ժամանակ չկայ, քանի որ Եւրոպա Հայկական խնդրը մտացած է, մենք պէտք է իր միտքը ձգենք:

Թափառիկ — Վերջին խօսք կը

պաշտպանուած էին: Այս աշխատանքը երկրաշարժներու ճարտարութեան ամենագեղեցիկ ապացոյցն է:



Ս. ԲԵՆԻՊՈՒՐԿԻ ԲԱՆԱԲԱՊԵՏՆ

Ի ԲԱՐԻՉ

Ս. Բեղրպուրիի քաղաքապետ՝ պ. Լէլիանօֆի Բարիզ գալը — յ'անուն Ռուս մայրաքաղաքին Ֆէլիքս Ժօնի գերեզմանին վրայ պսակ մը դնելու — միայն քաղաքավարական ցոյց մը չէ, այլ նաև համակրական գործ մ'է: Թիրաւի յայտնի է թէ Ս. Բեղրպուրիի քաղաքապետն, այս ճանապարհորդութիւնը առանց իւր վեհապետին հրամանին չըրաւ: Ուրեմն մենք Յըրանգօ-Ռուսական նոր մերձեցման մը փաստին առջև կը գտնուինք: Այն յարգանքը որ այսպիսով հասարակապետութեան նախկին և ողբացեալ նախագահին կը մատուցուի, առանց քաղաքական կուսակցական խտրութեան բոլոր ֆրանսացւոց հաճոյք կը

սեմ որ ցոյցը բոլորովին անժամանակ է. Անգլիոյ դեսպանը անցեալ օր ինձ բացարձակապէս յայտարարեց, երբ հայկական խնդրի մասին կը խօսակցէինք, թէ հայերը Անգլիոյ վրայ բնաւ յոյս դնելու չեն, քանի որ Ռուսիոյ ընդդիմութիւնը կայ, Անգլիա իսկ մը չէ կարող ընել, հայերը պէտք է հանդարդ կենան և գոհ լինին առ այժմ տրուած ծրագրի պատուականութենէն. ապագային այդ ծրագիրը ընդարձակելու շատ յոյսեր կան, հիմա այսչափ է, վաղը այսչափ կըլլայ ըսաւ: (Թափառիկ նախ ցուցամատին ծայրը ցոյց կուտայ բթամատով, յետոյ ամբողջութիւնը):

Արփիար — Ո՞վ կարեւորութիւն կուտայ այդ դիւանապետներու խօսքերուն: Տեսէ՛ք, ինչպէս նմանը չ'տեսնուած ցոյց մը պիտի լինի, Հնչակեանները մեռած չեն...:

(Արփիար ճիւղալային քովի մտնելով մը կը հեռանայ):

Թափառիկ — (առանձին) Վա՛յ մեր ազգին, որ այսպիսի ճիւղալներ պիտի առաջնորդեն: Անէ՛ծք անոնց, որ այսպիսի տրամադրութիւն և սկզբունք չունենցողներ գործի գլուխն կանգնեն, փորձուած և հանրաձայնօթ վատերը կրկին փորձելու յիմարութիւնը կ'ունենան: Անամօթաբար Սուլթանին ոտները լողոյ և մինչև վերջը անոր հաւատարմութիւն ուխտող դաւաճանը, այսօր յեղափոխական է դարձեր և ազգին ճակատագիրը կը վարէ: Հազար տափաս, վա՛յ խեղճ ազգին որ ասանկ դաւաճաններու կը հետեւի...:

(Վարագոյրը կ'ընէ)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Տեսարանը տեղի կ'ունենայ ցոյցէն երկու օր առաջ Բերայ Ստեփան Մեղիքեանի տունը: Կոկիկ զարդարուած սրահի մը մէջ, մեծ սեղանի

պատճառէ: Բարիդի քաղաքապետական վարչութիւնը շատ լաւ ընդունելութիւն մը ըրաւ պ. Լէլիանօֆին, որուն պատկերը այստեղ կը գտնուի:

ՄԱՐՇԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Մարշան հրամանատարը (commandant) ողջ առողջ հասեր է մինչև հապէշիստանի Մէնէլիքի մայրաքաղաքը: Այդ գիտնականը, որ այսօր Յըրանսայի մէջ մեծամեծ ժողովրդականութիւն վայելող անձանց մին է, ժամանակ մը Մէնէլիքի քով իւր յովանութիւնն առնելէն յետոյ, քիչ ժամանակէն պիտի վերադառնայ Յըրանսա, ուր իրեն խիստ համակրելի ընդունելութիւն մը կը պատրաստուի:

A. Saissy և Մելիք Ս. Դաւիթ-Բէկ 26 Ապրիլ 1899 Բարիզ

ԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՍՐԿԱՆԵՐԸ

Նախորդ յօդուածիս վերջը ըսի թէ մտադիր եմ Միութեան ընթերցողներուն ներկայացնել հետզհետէ ազգային յեղափոխութեան սրիկաները: Կ'սկսիմ այսօր.

Մեր յեղափոխութեան սրիկաներուն առաջինը անվիճելի կերպով Զօպանեանն է, միւսները չի պիտի վշտանան անուշտ առաջնութիւնը անոր տալու: Կէտեր կան անտարակոյս որոնց մէկը կամ միւսը Զօպանեանէն առաջ են, բայց ընդհանուր հայեացքով ազգային իմաստակը իմ

մը շուրջը քաղմած են Արփիար, Սահմանեան, Բէլէկեան և Ստեփան Մեղիքեան):

Ստեփան Մեղիքեան — Այսօր փաշան տեսայ, ըսաւ որ ձեզ այստեղ հաւաքեմ և վերջնականապէս զենքի խնդրը որոշուի:

Արփիար — Ես արդէն մասամբ յաջողած եմ, այսինքն որոշած եմ առանց մեր ընկերներուն գիտութեան մի քանի ուժեղութիւն բաժնել: Ինչ կարող ենք ընել, վերջապէս փաշային կամքը տեղը տանելու է:

Ստեփան Մեղիքեան — Անշուշտ, անշուշտ:

Օհանջանեան — Եւ արդէն ցոյցը ինքնին ոչինչ արժէ, եթէ զենք չի լինի:

Բէլէկեան — Ես թէ և սկզբունքով համաձայն չեմ դէնք բաժնելու, սակայն մեկնոյն ժամանակ կը մտածեմ որ չենք կարող մերժել փաշային առաջարկը:

Ստեփան Մեղիքեան — (խօսքը Արփիարին ուղղելով) Սրբազան տեսա՞ք:

Արփիար — Այո՛, մեծ դժուարութեամբ համոզեցի:

Բէլէկեան — Համոզուեցաւ...:

Արփիար — Մասամբ: Յայտնեցի որ ցոյցը յեղափոխական դոյն չ'պիտի ունենայ, լոկ ժողովրդական ցոյց մը, կամ լաւ ևս աղերս մը:

Օհանջանեան — Զենքի մասին բան չի յայտնեցիր:

Արփիար — Ինչպէս կարելի էր, քանի որ խաղաղասիրական պարզ ցոյցին իսկ համակրութիւն ցոյց չէր տար, հետեւաբար զգուշացայ այդ մասին կասկածներ ներշնչելու: Առանց զենքի պարզ ցոյցին համար իսկ առարկեց որ, թուրք մուսուլման դադար ժողովուրդ մ'է, և կը վստիսմ որ մեծ կոտորածի մը պատճառ դառնաք, եայն: Ես ալ պատ

բաւուրքը ունի ազգային յեղափոխութեան առաջին սրիկան կոչուելու:

Անմեղ հայ աղջկան մը անջնջելի անէծքը չէ՛ որ սրիկայի տիտղոսը կուտայ Արշակին. արդար չի պիտի ըլլայ արդէն իր ներքին կեանքին մէջ մտնալ, և զինքը հայ յեղափոխութեան սրիկան անուանելու իբրեւ ապացոյց՝ իր ճակտին քսուած հայ աղջկան մը արիւնը ցուցունել հասարակութեան. թո՛ղ ինք մաքրէ այդ արիւնը ինչպէս որ կուզէ, և ինչպէս որ կրնայ:

Ես իր հրապարակային կեանքը միայն պիտի քննեմ, և անոր մէջ ի յայտ պիտի բերեմ արդարացումը իրեն տուած տիտղոսիս:

Սասունի գէպերուն միջոցին Չօպանեան անտարբեր գտնուեցաւ ազգային շարժումին: Հեշտ բան չէր այն ատեն, և անկէ ետքն ալ յեղափոխական ըլլալ Պօլսոյ մէջ:

Ամենամտերիմ՝ բարեկամներու առջև առանց քաշուելու կը յայտարարէր թէ՛ Հայաստանի ջարդերը չեն ներգործեր իր վրան, թէ ինք բանաստեղծ ծնած ըլլալով անմեղ կուսին սէրը միայն գիտէ երգել, և լուսինը պաշտել:

Բայց երբոր 1895ի սկիզբները Բարիզ եկաւ, բաճկոնին ծակած գըրպանները կարկտած միջոցին յանկարծ յիշեց Հայաստանի ջարդերը, սիրտը կտոր կտոր եղաւ, և աչքերը դարձունելով յեղափոխականներուն «կեցցէ՛ յեղափոխութիւն» գոչեց. ու տարի մը շարունակ Բարիզի մէջ ջերմ յետախանցիկ որ, եթէ փոքր կոտորած մը լինէր, տեղութեանց զբաւառները իսկոյն Պօլսոյ կը մտնէին և Հայկական խնդիրը վերջնականապէս կը լուծուի: Այս բառերն վրայ միայն համոզուեցաւ:

Ստեփան Մելիքեան — Արմա՛ն, թո՛ղ այդպէս կարծէ. տեղութիւնները իրենց մէջ այնքան անհամաձայն են որ, ո՛չ մէկը չի պիտի համարձակի առաջին յանդուգն քայլը առնել. ոչ ոք մասին կատարելապէս վստահ եմ, փաշան պարզապէս յայտնեց ինձ ըլլալիքը:

Օհանջանեան — Ո՞րչափ զէնք է բաժանուելու:

Ս. Մելիքեան — Փաշան հարկւր հատ բաւական է ըսաւ. միայն պէտք է խտտի. պատուիրել որ բնաւ զէնք չի պարպեն. եթէ ծանր բան մը պատահի թո՛ղ փախչին և զէնքերը նետեն:

Արփիար — Օհանջանեան կը կարգադրէ ամէն բան:

Օհանջանեան — Այո՛, հէնց վաղը խմբագրութեան կանչելու եմ:

Արփիար — Սակայն զէնքի խնդիրը մեր իսկ ընկերները բնաւ իմանալու չեն:

Քէլէկեան — Այո՛, այո՛, ճիշդ է, յետոյ կարող են մեր վրայ կասկածել:

Օհանջանեան — Այդ մասին դուք հոգս մի՛ քաշէք, ես ամէն բան զիջելովնայով եմ կարգադրելու:

Արփիար — Ուրեմն զէնքի խնդիրը վերջնականապէս կարգադրուած է: Միայն Մելիքեան էֆէնտիէն պիտի խնդրէի որ մեր բանտարկուած տղան չուտով արձակուէր:

Ս. Մելիքեան — Փաշային երէկ խօսեցայ, պիտի արձակէ: Միայն ըսաւ որ շատ համարձակ չի գործեն: Հա՛, լաւ միտքս ինկաւ, Գ.ին խնդիրը ինչ եղաւ, փաշան հետաքրքիր էր իմանալ, վճարեց...

Արփիար — Ո՛չ տակաւին. դրամ չունիմ կրտսէ, բայց մենք վերջնագիրը մը զրկեցինք մահուան սպառնալիքով:

Ս. Մելիքեան — Բայց եթէ չի վճարէ ինչ պիտի ընէր:

Արփիար — Ես ուստակ կը հանենք, Բարիզ գալէս երկու շաբաթ ետքը, որ մը Արփիար, Չօպանեան և Ես այցելութեան գացինք Բարիզի ազգայիններէն մէկ քանիններուն. Պօլսէն

զափոխական եղաւ և եռանգուն ջատագով ի Կ. Պօլսո տեղի ունեցած յեղափոխական ցոյցերուն:

Կ. Պօլսոյ Հնչակեան մասնաճիւղը ամէն ամիս Արշակին 100 ֆր. կը զրկէր, ազգային դատին աշխատելու համար. Չօպանեան պատճառ մը չունէր այն ատեն յեղափոխութեան հակառակ ըլլալու, ընդհակառակը:

1896ի Յունիսին Հնչակեան կուսակցութեան ներքին խնդիրներուն պատճառաւ Չօպանեանի ամսական 100 ֆրանքը դադրեցաւ. Արշակ այն միջոցին քիչ մը զգաց յեղափոխութեան պարագային ըլլալը, բայց ձայն չի հանեց, տակաւին յոյս ունէր նոր կեդրոնին կազմութեանը վրայ. միայն թէ սկսաւ Բարիզ հաստատուած ազգայիններուն դուռները ձեռք առնել:

Նոյն տարւոյն Յունիսին եկաւ Բարիզ. Արփիար և Փաշայեան հոս էին արդէն. տեսակցեցանք ազգային դատին և յեղափոխական նոր յատակագիծներու ընդունելութեանը վրայ: Չօպանեան ամենքէս առելի եռանդուն երեցաւ ինծի, պնդեց որ երիտասարդ թիւրքերուն հետ միանալով յախուռն բան մը ընենք Պօլսոյ մէջ, և այս նպատակով տեսակցութիւններ պատրաստեց երիտասարդ թիւրքերուն հետ. այդ տեսակցութիւնները արդիւնք մը չունեցան:

Բարիզ գալէս երկու շաբաթ ետքը, որ մը Արփիար, Չօպանեան և Ես այցելութեան գացինք Բարիզի ազգայիններէն մէկ քանիններուն. Պօլսէն

նոր եկած ըլլալուն՝ խօսակցութիւնը հայկական յեղափոխութեան և ի Պօլսո եղած ցոյցերուն վրայ եկաւ. մեր ջոջերը բնականաբար հակառակ էին յեղափոխութեան և յեղափոխականներուն:

Մէջերնուն մէկը մանաւանդ Մարմարայի ծովագետը մեծցած ըլլալուն յեղափոխականներուն գէմունեցած զայրոյթը հայհոյութիւններով զարգարեց:

Չարմացումով տեսայ թէ Արփիար և Չօպանեան փոխանակ պաշտպանելու յեղափոխական գործը և գործիչները, ընդհակառակը համամիտ կը գտնուին ջոջերուն:

Երբոր փողոցին մէջ երեքնիս առանձին գտնուեցանք՝ ըսի իրենց.

— Ինչո՞ւ այսպէս վարուեցաք, և թող տուիք որ բերանունն եկածը ըսեն:

— Ինչ կարեւորութիւն կուտաս անոնց քսածին, պատասխանեց Արփիար. մեր գերազանցութիւնը ինչէ՞ն պիտի հասկցուի, իրենց համակարծիք ձեռնադրով, մենք դարձեալ մեր գործը կը նայինք, մենք խելք ունինք, անոնք գրամ, պէտք է որ զանոնք մեր ձեռքին մէջ մէյմէկ գործիք ընենք յեղափոխութեան օգտին համար:

— Բնականաբար, յարեց Չօպանեան:

Բնականաբար. այո՛, Չօպանեան, բնականաբար չէիք կրնար պատասխանել յեղափոխականներուն գլխուն ջոջերուն թափած հայհոյանքին, բանի որ Մ... ամիսը 50 ֆր. և Թ... 60 ֆր. կուտային քեզի: Վատ արարած:

Ս. Ստեփանեան
Բարիզ 26 Ապրիլ 1899
(Շարունակելի)

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

«Միութիւն»ի 27րդ թուի մէջ կարգացի պ. Արգարի ըրած դիտողութիւնը «Իմականորեն»ի հեղինակին և Մարտականներու ընդհ. ժողովի կողմէ պահանջած բացատրութեան մասին հրատարակութիւն մը, որուն համար պատշաճ համարեցի յանուն արդարութեան գիտցածս անկեղծօրէն խոստովանիլ հրապարակաւ: Նպատակ չունիմ ո՛չ մին պաշտպանել և ո՛չ միւսը հարուածել: Պ. Ճանկիւլեան զիս չի ճանչնար բոլորովին անծանօթ եմ իրեն. սակայն երբ տարիուկէս առաջ Աղեքսադրիա կը գտնուէի, անոր սովորաբար յաճախած տեղերը գտնուելով շատ մօտէն զիտած եմ անոր անկեղծ հայրենասիրութիւնը մարդ մը իրեն թէ ուրիշի մը խօսքերուն հաւատալու է, արդեօք ինչու համար համար երբեմն մարդիկ կուզեն լոյսին խաւար ըսել՝ բայց քանի որ լոյսը հրապարակի վրայ ինքնին կը փայլի. հարկ չկայ երկայն գրելու, կը բաւականանամ գիտցածներէս մէկ երկու կէտեր միայն յիշել:

Պ. Արգարի դիտողութեան կը հասկնանք թէ՛ «Իմականորեն»ի պարունակութիւնը ճշմարտութենէ բոլորովին զուրկ ըլլալու է, քանի որ հեղինակէն բացատրութիւն պահանջուած է: Ըստ մեզ սխալ է այդ դատողութիւնը, ինչու որ ամբաստանեալ մը որքան մեղաւոր լինի, բնականաբար միշտ կը ջանայ զանազան կեղծաւորութեամբ զինքը արդարացնել. բայց դատաւորներուն կարող է կլկեցնել, երբէք՝ ճիշդ այսպէս ը-

Ս. Մելիքեան — (ժպտելով) Իմ բաժինս ալ չի մոռնաք...

Արփիար — Չի կշտացա՞ք: Բայց այն տղան բանտէն հանել տուր, մարդու պէտք ունինք, ո՞վ պիտի հաւարէ զրամները:

Ս. Մելիքեան — Գլխուս վրայ: Ան չէ ամա. մինչև ցարդ փաշային բաժինը ո՞րչափ եղած է:

Արփիար — Հինգ հազար ոսկիի մօտ է:

Ս. Մելիքեան — Հինգ հազար... Մարդը տիւտիւկը չալեց, այդպէս երթայ Հինգ հազար ևս կ'ստանայ:

Քէլէկեան — Անշուշտ, բայց իրաւունքն է, մենք անոր սայեհէն կապրինք կոր: Եթէ Նազմի խորամանկութիւնը չի լինէր, Ես, Արփիարը, Օհանջանը և զեռուրիները հիմայ արքայազայիբու մէջ կը հեծէինք...

Ս. Մելիքեան — Բան չունիս, թո՛ղ այդ տեղերը ազատ Հայաստան երազող արմատները հեծեն, մենք լաւ գիտենք որ հայերը մարդ ըլլալիք չունին, գէթ մենք օգտուինք:

Օհանջանեան — Ես պէտք է գրեմ տեսնել մի քանիսին, գուցէ վաղը չի կարողացայ նրանց տեսնել:

Արփիար — Արդէն մնալու պէտք մը չունինք. միասին երթանք:

(Ամենքը մէկ ոտքի կ'ելեն մեկնելու համար):

Արփիար — (Ս. Մելիքեանին ուղղելով) Վաղը փաշային կը յայտնէք մեր որոշումը:

Ս. Մելիքեան — Անկասկած:

Արփիար — Ուրեմն, մնաք բարով:

(Բոլորը Ս. Մելիքեանի ձեռքը սեղմելով կը մեկնին, և վարագոյրը կ'իջնէ):

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ
(Տեսարանը տեղի կ'ունենայ Պատրիարքարանի և Պապը Ալիի փո-

ղոցներուն մէջ: Ամէն կողմ փոխաներ, ոստիկաններ և զինուորներ կը շրջին: Ամէն կողմ կասկածելի գէմքեր՝ քիւրդ, չէքէզ և լազ հագուստներով: Զանազան անկիւններ դիգուած սօփաներ: Յոյցին մասնակցող հայեր խմբովին Պատրիարքարանի փողոցէն անցնելով Պապը Ալի կը դիմեն Ս ա ս ն ոյ եր գ ը երգելով. ոստիկանները և փոխները անոնց առաջացումը չեն արգելեր, անտարբեր կը դիտեն: Հայկական խումբը ապահով կը հասնի Պապը Ալիի առջև. զինուորական սպայ մը անոնք դիմաւորելով կ'ըսէ):

Սպան — Այս ի՞նչ բազմութիւն է, ինչ կուղէք:

Ս. Մելիքեան — Սատրագամը պիտի տեսնենք:

Սպան — Այսպէս բազմութեամբ Սատրագամը չէք կարող տեսնել, խնդրեցինք ինչ է ինձ յայտնեցէ՛ք, ես կը հաղորդեմ:

Չայն մը — Չըլլա՛ր, մենք պէտք է ներկայանանք իրեն:

Սպան — Ձեր վարմունքը օրէնքի հակառակ է, խօսք մտիկ ըրէք զաւակներս:

Չայններ — Չըլլա՛ր, չըլլա՛ր, պէտք է տեսնենք:

Չինուորական մը — (Սպային ուղղելով) Հրաման ըրէք չըլլենք:

Սպան — Չըլլա՛ր, անուշ տեղը կապելու է, խաղովութիւն կըլլայ:

Չինուորական մը — Բայց կը տեսնէք կոր որ խօսք մտիկ ընելու տրամադիր չեն:

(Շարունակելի)

Նոր գրաշարի անվարժ ըլլալուն պատճառով այս թուին մէջ բաւական տառասխալներ սպրդած են:

